

Որակի հոչակագիր՝ Փոքր և միջին ձեռնարկատիրության վիճակագրություն

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Փոքր և միջին ձեռնարկատիրության վիճակագրություն
0.2	Ոլորտը	Փոքր և միջին ձեռնարկատիրության վիճակագրություն
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժին Բաժնի պետ Վարդան Արևշատյան Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0010, Հանրապետության պողոտա, Կառավարական 3 շենք Հեռախոս՝ +374 11 580 372, Էլ. փոստ՝ business_reg@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) վիճակագրության վարման նպատակն է ունենալ միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին համապատասխանող վիճակագրություն: ՓՄՁ վիճակագրությունը մշակվել և ներդրվել է Արմստատի կողմից՝ 2017թ.-ին՝ Դանիայի, Լիտվայի վիճակագրական ծառայությունների ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) փորձագետների կողմից ցուցաբերված մեթոդաբանական օժանդակությամբ: ՓՄՁ վիճակագրության մշակման հիմքում ընկած են Եվրոստատի ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) համապատասխան մեթոդաբանությունները:
0.5	Օգտագործողները և կիրառումը	ՓՄՁ վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական ու տեղական կառավարման մարմինները, կրթական, գիտական, հետազոտական ու միջազգային վիճակագրական կազմակերպությունները, վիճակագրական տեղեկատվության այլ օգտագործողները:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	ՓՄՁ վիճակագրության վարման տեղեկատվական հիմնական աղբյուր է հանդիսանում վիճակագրական բիզնես ռեգիստրի հաշվետու տարվա արդիականացված տվյալների շտեմարանը: ՓՄՁ վիճակագրության վարման համար կիրառվում է նաև Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) կողմից Արմստատին ներկայացվող Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների շտեմարանի տեղեկատվությունը:

0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում/ստացվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի, հնգամյա ու տարեկան վիճակագրական ծրագրերի, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի (ՎՊԽ) 2016թ.-ի հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և այլ որոշումների, ինչպես նաև Արմստատի ու վարչական ռեգիստր վարող պետական մարմինների (մասնավորապես՝ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության և Պետական եկամուտների կոմիտեի) միջև ստորագրված տվյալների փոխանակման վերաբերյալ փոխըմբռնման հուշագրերի, համատեղ հրամանների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողներ) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը հաշվարկվում է տարեկան պարբերականությամբ՝ առաջնորդվելով Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի 9-րդ՝ «Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափավորություն» սկզբունքի պահանջներով (տես՝ http://armstat.am/file/doc/99489448.pdf հղումը), Եվրամիության «Աջակցություն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի» շրջանակում՝ հաշվետու և նախորդ/բազիսային ժամանակաշրջանների վիճակագրական հաշվետվությունների, դրանցում ընդգրկված հարցերի (ցուցանիշների) քանակի, հաշվետվությունների ներկայացման պարբերականության փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության համեմատման արդյունքում:
1 Բովանդակություն		

1.1	Բովանդակության նկարագիրը	<p>ՓՄՁ վիճակագրությունը բովանդակում է հետևյալի մասին տեղեկատվությունը.</p> <ol style="list-style-type: none"> 1) ՓՄՁ վիճակագրության վարման մեթոդաբանական նկարագիրը, 2) տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների քանակական նկարագիրը, 3) տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների կողմից արտադրված ապրանքների ու մատուցված ծառայությունների ծավալը (շրջանառությունը) , 4) տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների վարձու աշխատողների թվաքանակը, 5) վարձու աշխատողների միջին աշխատավարձը, 6) տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների կողմից ստեղծված համախառն ավելացված արժեքը, 7) տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների բիզնես-դեմոգրաֆիական նկարագիրը, 8) հղումներ՝ ՓՄՁ ոլորտի միջազգային վիճակագրական մեթոդաբանությանը:
-----	--------------------------	--

1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>ՓՄՁ սուբյեկտների շրջանակն ընդգրկում է տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրության (NACE rev2) ոչ ֆինանսական բիզնես հատվածի B՝ «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում», C՝ «Մշակող արդյունաբերություն», D՝ «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում», E՝ «Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում», F՝ «Շինարարություն», G՝ «Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում», H՝ «Փոխադրումներ և պահեստային տնտեսություն», I՝ «Կացության և հանրային սննդի կազմակերպում», J՝ «Տեղեկատվություն և կապ», L՝ «Անշարժ գույքի հետ կապված գործունեություն», M՝ «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն», N՝ «Վարչարարական և օժանդակ գործունեություն» բաժինները և S՝ «Սպասարկման այլ ծառայություններ» բաժնի 95՝ «Համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգում» հատվածը (S95):</p> <p>ՓՄՁ սուբյեկտների տարանջատումն իրականացվում է ինստիտուցիոնալ մակարդակում՝ տնտեսական գործունեության հիմնական տեսակով:</p> <p>ՓՄՁ սուբյեկտների կողմից արտադրված ապրանքների ու մատուցված ծառայությունների ծավալում (հասույթում) չեն ներառվում ավելացված արժեքի ու ակցիզային հարկերը:</p> <p>Տնտեսական գործունեության հիմնական տեսակը որոշվում է առանձին տնտեսական գործունեության տեսակների գծով ձևավորված ավելացված արժեքներից առավելագույնի մեծությամբ:</p> <p>ՓՄՁ սուբյեկտների տարանջատումն իրականացվում է բացառապես աշխատողների միջին տարեկան թվաքանակով որոշվող չափերով՝ հետևյալ խմբերով.</p> <table border="1" data-bbox="539 1375 1534 1785"> <thead> <tr> <th data-bbox="539 1375 1104 1558">ՓՄՁ դասակարգում</th> <th data-bbox="1104 1375 1534 1558">Վարձու աշխատողների միջին տարեկան թվաքանակ, մարդ</th> </tr> </thead> <tbody> <tr> <td data-bbox="539 1558 1104 1606">Գերփոքր</td> <td data-bbox="1104 1558 1534 1606">Մինչև 9</td> </tr> <tr> <td data-bbox="539 1606 1104 1696">այդ թվում՝ <i>վարձու աշխատող չունեցողներ</i></td> <td data-bbox="1104 1606 1534 1696">0</td> </tr> <tr> <td data-bbox="539 1696 1104 1745">Փոքր</td> <td data-bbox="1104 1696 1534 1745">10-49</td> </tr> <tr> <td data-bbox="539 1745 1104 1785">Միջին</td> <td data-bbox="1104 1745 1534 1785">50-249</td> </tr> </tbody> </table>	ՓՄՁ դասակարգում	Վարձու աշխատողների միջին տարեկան թվաքանակ, մարդ	Գերփոքր	Մինչև 9	այդ թվում՝ <i>վարձու աշխատող չունեցողներ</i>	0	Փոքր	10-49	Միջին	50-249
ՓՄՁ դասակարգում	Վարձու աշխատողների միջին տարեկան թվաքանակ, մարդ											
Գերփոքր	Մինչև 9											
այդ թվում՝ <i>վարձու աշխատող չունեցողներ</i>	0											
Փոքր	10-49											
Միջին	50-249											

		<p>Աշխատողների թվաքանակում ներառվում են անորոշ կամ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատանք կատարող վարձու աշխատողները:</p> <p>Եվրամիության և ՏՀԶԿ միջազգային տվյալների հավաքածուն ՓՄՁ դեմոգրաֆիայի վարման համար որպես միավոր դիտարկում է կազմակերպությունը (ինստիտուցիոնալ միավոր): Այն իրենից ներկայացնում է ֆինանսական և ներդրումային որոշումների կայացման առումով ինքնավար սուբյեկտ, որն ունի ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման նպատակով ռեսուրսների բաշխման իրավասություններ և պատասխանատվություն, կարող է մեկ կամ մի քանի վայրերում իրականացնել մեկ կամ մի քանի տեսակի տնտեսական գործունեություն:</p> <p>ՓՄՁ բիզնես-դեմոգրաֆիայի (տնտեսավարողների ծնունդ, մահ (գործունեության դադարեցում, լուծարում), գոյատևում(երկարակեցություն)) վարումն իրականացվում է ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի՝ հետևյալ խմբերով.</p> <ol style="list-style-type: none"> 1) Գերփոքր տնտեսավարողներ. այդ թվում՝ <ul style="list-style-type: none"> - վարձու աշխատող չունեցողներ, - 1-4 վարձու աշխատող ունեցողներ, - 5-9 վարձու աշխատող ունեցողներ, 2) 10-19 վարձու աշխատող ունեցող տնտեսավարողներ. 3) 20 և ավելի վարձու աշխատող ունեցող տնտեսավարողներ:
--	--	--

2. Ժամանակայնություն

2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Հաշվետու տարի:
2.2	Հրապարակման ամսաթիվը	Հաշվետու տարվան հաջորդող տարվա դեկտեմբեր:
2.3	Ճշտապահություն	Սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Տարեկան

3 .Ճշգրտություն

3.1	Ընդհանուր ճշգրտություն	ՓՄՁ վիճակագրության վարումն իրականացվում է բիզնես ռեգիստրի արդիականացված և ճշգրտված տվյալների շտեմարանի տեղեկատվության հիման վրա:
-----	------------------------	--

3.2	Անճշտության աղբյուրները	Ցուցանիշների անճշտությունը կարող է պայմանավորվել՝ - վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների կողմից Արմատատին թերի և/կամ ոչ ամբողջական և/կամ ոչ արժանահավատ տեղեկատվության ներկայացմամբ, - վարչական ռեգիստր վարող պետական մարմնի կամ հանրային բաց աղբյուրներում թերի և/կամ ոչ ամբողջական և/կամ ոչ արժանահավատ
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ցուցանիշների փաստացի ներկայացված և իրականացված ճշգրտումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ առանձին տնտեսավարողների պահպանվում է առանձին էլեկտրոնային շտեմարանում, ինչը հնարավորություն է տալիս ամփոփ ձևով գնահատելու հայտնաբերված
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	ՓՄՁ վիճակագրական ցուցանիշները ժամանակագրական տեսանկյունից համադրվում են՝ տեղի ունեցող զարգացման/անկման միտումները բացահայտելու նպատակով:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Այլ տեղեկատվական աղբյուրներում համանման վիճակագրություն չի վարվում, ինչի պատճառով համադրելիություն առկա չէ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Ուղղակի և անուղղակի աղբյուրներից հավաքված/ստացված նախնական տվյալները ենթարկվում են ստուգաճշտման և/կամ վերանայվում են այդ աղբյուրների կողմից ներկայացված նոր՝ ճշգրտված ցուցանիշների հիման վրա:
5 .Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	Տվյալները հրապարակվում էլեկտրոնային եղանակով՝ վիճակագրական տեղեկագրի ձևաչափով:
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	ՓՄՁ վիճակագրության պատրաստման հիմքում ընկած վիճակագրական բիզնես ռեգիստրի արդիականացված շտեմարանի ձևավորման նպատակով ուղղակի աղբյուրներից հավաքված սկզբնական վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են թղթային կամ էլեկտրոնային ձևաչափերով՝ կախված դրանց ներկայացման եղանակից: Անուղղակի աղբյուրներից ստացված տեղեկատվությունը պահպանվում է էլեկտրոնային ձևաչափով: Նշված աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրման, ստուգաճշտման, մուտքագրման ու միավորման արդյունքում ձևավորվում է հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ վիճակագրական բիզնես ռեգիստրի տվյալների արդիականացված շտեմարանը, որն էլ կիրառվում է որպես տեղեկատվական աղբյուր ՓՄՁ վիճակագրության վարման համար: ՓՄՁ վիճակագրության պատրաստման գործընթացում կիրառվող ողջ տեղեկատվությունը պահպանվում է էլեկտրոնային ձևաչափով:

5.3	Փաստաթղթավորում	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես- գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373 :
5.4	Այլ տեղեկատվություն	Այլ տեղեկատվություն առկա չէ:
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: